# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 17-ի N 591-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

--ը, 2023 թվականի N -----Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N 591-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ Կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 17-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաքանակները սահմանելու կարգը հաստատելու մասին» N 591-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- որոշման նախաբանում «3-րդ մասի» բառերը փոխարինել «1-ին մասի 3-րդ կետի» բառերով,
- որոշման հավելվածի 3-րդ կետից հանել առնվազն 2000 օրինակ տպաքանակ ունեցող հայալեզու օրաթերթում և բառերը,
- որոշման հավելվածի NN 1-ին և 2-րդ Ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

2. Որոշման հավելվածի 5-րդ կետով նախատեսված ժամկետը 2023

թվականի համար սահմանել նոյեմբերի 30-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

**ՀՀ կառավարության 2023 թվականի**
**----------ի ----ի N --------Ն որոշման**

***«Ձև N 1***

**Հ Ա Յ Տ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՀԻԴՐՈՖՏՈՐԱԾԽԱԾԻՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

_______________________________________________________________
(հայտատուի տվյալները (կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը)

Սույնով խնդրում եմ տրամադրել 20----- թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն ստորև նշված օզոնային շերտը քայքայող նյութեր և (կամ) հիդրոֆտորածխածիններ ներմուծելու անհատական չափաքանակ՝

| NN ը/կ | Օզոնային շերտը քայքայող նյութ և (կամ) հիդրոֆտորածխածին | Ներմուծման անհատական չափաքանակի՝ խնդրարկվող քանակություն |
|---|---|---|

| | անվանում | քիմիական բանաձև | միջազգային տեխնիկական անվանում | (*օզոնային շերտը քայքայող նյութի դեպքում՝ կգ-ով, հիդրոֆտորածխածի դեպքում՝ մետրիկ տոննա $CO_2$ համարժեքով)* |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |

______________________________ **<u>ՀՀ շրջակա միջավայրի նախա</u>**

(հայտատուի (իրավաբանական անձի ղեկավարի)

անուն, ազգանուն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի անուն, ազգանուն)

Հայտն ընդունված է 20------- թ

______________

(ստորագրություն)

_

_

_

***<u>Ձև N 2</u>***

**ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՀԻԴՐՈՖՏՈՐԱԾԽԱԾԻՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿ N ____**

Տրված է ____________________________________________________________________________

________________

(ներմուծողի տվյալներ (կազմակերպության անվանում և գտնվելու վայր կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի անուն, ազգանուն և բնակության վայր)

այն մասին, որ նրա կողմից 20-------թվականի հունվարի 1-ից մինչև 20--------թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կարող է Հայաստանի Հանրապետություն ներմուծել օզոնային շերտը քայքայող նյութերը և հիդրոֆտորածխածինները՝ ստորև նշված քանակություններով.

| NN ը/կ | Օզոնային շերտը քայքայող նյութը և (կամ) հիդրոֆտորածխածին | | | Ներմուծման անհատական չափաքանակ (*օզոնային շերտը քայքայող նյութի դեպքում՝ կգ-ով, հիդրոֆտորածխածի... դեպքում՝ մետրիկ տոննա $CO_2$ համարժեքով)* |
|---|---|---|---|---|
| | անվանում | քիմիական բանաձև | միջազգային տեխնիկական անվանում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |

Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների նշված քանակությունը կարող է ներմուծվել մեկից ավելի խմբաքանակներով:

Լիազոր պետական մարմնի ղեկավար ________________
(ստորագրությ...

Տրված է _______ ________________ 20------ թ.

Կ.Տ.»